

ԳԼՈՒԲԱԼԱՑՄԱՆ ԲԱԶՄԱԶԱՓՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՑԱՆՑԱՅԻՆ ԲՆՈՒՅԹԸ

Ք. գ. թ. Կարեն Գալոյան

Գլոբալացումը՝ որպես բազմաչափ գործընթաց, համամարդկային և ազգային շահերի, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության, խոցելի խմբերի և էթնիկական փոքրամասնությունների ինքնության արդիականացման և գլոբալ անվտանգության քաղաքականության միասնությունն է:

1. Ցանցային կառավարումը և գլոբալացման մարտահրավերները

Հանրային և քաղաքական կառավարման գործընթացում տեղի ունեցող արմատական փոփոխությունները վկայում են, որ 21-րդ դարի մարդկությունն աստիճանակարգային և ցանցային կառավարման համակարգերի զուգամիտման ականատեսն է: Գլոբալացման այս բազմաչափ գործընթացում լայնորեն կիրառվում է ցանց՝ «network» եզրույթը, այստեղից էլ՝ ցանցային կառավարում, ցանցային զիտակցություն, ցանցային իրականություն, ցանցային նպատակներ և այլն:

Ցանցային կառավարումն իր ռազմավարությունը կառուցում է պետության և հասարակության, հասարակական կյանքի հանրային, մասնավոր և խմբային սեկտորների միջև փոխհարաբերությունների վրա: Ինչպես նշում են Աթկինսոնը և Քոուլմանը, տարբեր մակարդակներում ինքնադրսևորվող և ինքնակառավարվող սոցիալական ցանցերին բնորոշ են այսպես կոչված «հատվածային մակարդակով պետական ինքնուրույնություն» չորս պայման. *իր դերի մասին հստակ պատկերացում, իր մանդատի հիմքում ընկած արժեքների համակարգ և նախարարի (կառավարչի) աջակցություն, մասնագիտական գիտելիքներ և վարք*, որը համոզում է պատվիրատուներին, օրենքների և կանոնակարգերի հետևողականորեն պահպանվող փաթեթ, և իր մանդատին վերաբերող տեղեկատվություն ստանալու կարողություն [1, p. 80-81]: Նշված հեղինակները դիտարկում են ցանցային կառավարման ութ մակարդակ: Անշուշտ, ավելի մեծ տեղեկատվահաղորդակցական հոսքերի դեպքում կաճի

նան ցանցերի մակարդակների թիվը: Օրինակ, Վան Վաարդենը պնդում է, որ ցանցային կառավարման կարևոր չափանիշներ են՝ «(1) դերակատարները, (2) գործառույթը, (3) կառուցվածքը, (4) ինստիտուցիոնալացումը, (5) վարվելակերպի կանոնները, (6) իրավասությունների հարաբերությունները, (7) դերակատարների ռազմավարությունը» [2, p. 32]:

Գլոբալացումն իսկապես բազմամակարդակ երևույթ է, որն իրականացվում է բազմաթիվ ֆորմալ և ոչ ֆորմալ ինստիտուտների միջոցով: Մակայն այս բազմաչափության մեջ որոշիչ է հասարակության քաղաքական համակարգի գերակա ինստիտուտի՝ պետության դերը: Դեռ իր ակունքներից՝ իբրև սոցիալական երևույթ, պետության հիմնական նպատակներից է աշխարհագրական սահմանված տարածաշրջանում հանրային անվտանգության ապահովումը և՛ արտաքին, և՛ ներքին սպառնալիքներից: Քաղաքական, տնտեսական, սոցիալական բազմաթիվ վերափոխումների ընթացքում, անցնելով ազգայնականության հաստատման, արդյունաբերական հեղաշրջումների, համաշխարհային պատերազմների և միջուկային զենքի ստեղծման գործընթացներով, պետության ինստիտուտը շարունակում է պահպանել կազմակերպված պաշտպանության և ազգային անվտանգության ապահովման իր առաջնային դերը:

Գլոբալ մարտահրավերները ներգործել են հզորության տարբեր մակարդակներում գտնվող բոլոր պետությունների վրա և պահանջում են միասնական միջոցների ձեռնարկում, քանի որ ավանդական ներպետական անվտանգության ծրագրերը նախատեսված չեն դրանց արդյունավետ կասեցման համար: Փենսիլվանիայի համալսարանի պրոֆեսոր Ն.Ռիփսմանը գտնում է, որ պետությունների մեծ մասն սկսել է պայքարել մարտահրավերների դեմ իրենց անվտանգության հաստատությունների կառուցվածքային փոփոխությունների և թե՛ ազգային, թե՛ միջազգային մակարդակներում *համագործակցային անվտանգության քաղաքականությունում դերակատարում ստանձնելու միջոցով*: Նրա կարծիքով, պետությունները հետամուտ են լինում այս գործընթացին, քանի որ պատմականորեն «...այն պետությունները, որոնք ձախողվել են ազգային անվտանգությունն ապահովող այսպիսի փոփոխությունների իրականացման ժամանակ, հանգել են տառապալից հետևանքների և ապագայում էլ ակնատես կլինեն այնպիսի պառակտումների, որոնք կթուլացնեն իրենց տեղը թե՛ տնտեսության և թե՛ անվտանգության դաշտում» [3, c. 5]: Նման ճակատագրի չարժանանալու նպատակով պետության որպես քաղաքական համակարգի գերակա ինստիտուտի, առաջնային գործառույթն ազգային անվտանգության ապահովումն է՝ զուգորդված ռեալիզմով, որն ուշադրությունը կենտրոնացնում է ազգային սահմանների, ֆիզիկական և հիմնարար արժանիքների պահպանմանը:

Տվյալ պայմանների առկայության դեպքում ազգային, էթնիկ, կրոնական,

մշակութային և դասային մակարդակների միջև արդյունավետ ու պատճառաբանված հաղորդակցությունն այլևս գլոբալացման դերակատարի ցանկության ընտրության արդյունք չէ, այն պոստմոդերն աշխարհի իրականության անհրաժեշտ մասն է [4, p. 63]: Այս համատեքստում աշխարհում տեղի ունեցող գործընթացների գլխավոր դերակատարը դառնում է մարդը, որն արդեն ապրում է իր իսկ արարած «նոր ժողովրդավարության» պայմաններում: Համընդգրկուն փոխակերպումները, տեխնոլոգիաների զարգացումը և տեղեկատվական ռեսուրսների անսահմանափակ հասանելիությունն էապես արագացնում են ինքնաբացահայտման, ինքնահաստատման գործընթացները՝ ապահովելով ընտրության ազատություն մեր մոլորակի համարյա յուրաքանչյուր բնակչի համար [5, c. 26-27]: Հետինդուստրիալ հասարակությունն ամենից առաջ մարդկանց միջև փոխազդեցությունն է, որտեղ մարդիկ սովորում են միասին ապրել, իսկ կապվածությունը տեղեկատվահաղորդակցական ռեսուրսների իրատես օգտագործման արդյունք է: Հասարակության կառավարման բյուրոկրատական հիերարխիկ ձևին փոխարինելու են գալիս հասարակության վարչական կազմակերպման նոր՝ ցանցային ֆորմալ և ոչ ֆորմալ ձևեր: Բացի պետական ինստիտուտներից, հանրային անվտանգության ապահովման գործընթացներին մասնակցում են նաև վերազգային, վերապետական ինստիտուտները և բոլոր այն միջազգային կառույցները, որոնց ցանցային գործունեությունը կարող է լինել և՛ ինստիտուցիոնալացված, և՛ ոչ:

Հանրային անվտանգության ապահովման գործում մեծ դեր ունեն տեղեկատվական-հեռահաղորդակցական տեխնոլոգիաները, որոնք, ինչպես նշում է Է.Կաստելլը, «թեպետ հասարակությունը չի պատվիրակում, սակայն հիմնականում դրանց կրողն է հանդիսանում, չնայած կարող է օգտագործել պետության ներուժը և կասեցնել դրանց առաջխաղացումը: Կամ հակառակը՝ պետության հետ համատեղ կարող է արագընթաց զարկ տալ տեխնոլոգիական ոլորտի արդիականացմանը և ապահովել դրանց անմիջական ներթափանցմանը ինչպես կառավարման, այնպես էլ հասարակական ակտիվ գործունեության ոլորտ» [5, c. 28-29]:

Տեղեկատվական-հեռահաղորդակցական տեխնոլոգիաների աստիճանական զարգացումը ֆորմալ և ոչ ֆորմալ կազմակերպություններին ամենահավանական ուղիներով միավորվելու կամ բաժանվելու նոր, աննախադեպ հնարավորություններ է ստեղծում՝ տեղեկատվական անվտանգության ապահովման ակնկալիքով: Տեղեկատվական ցանցի, մասնավորապես՝ Ինտերնետի տարածման արդյունքում հնարավոր է դարձել հետևել անընդհատ թարմացվող ներդաշնակ և աններդաշնակ տեղեկատվության շարժին և նորություններ ամբարել ցանկացած երևույթի վերաբերյալ [6, p. 2-6, 9-11]:

Մարդկության մուտքը տեղեկատվության դարաշրջան՝ իր արագությամբ, անսպասելիությամբ և անկանխատեսելիությամբ, լի է բազմաթիվ անո-

րոշություններով: Վերջիններիս կանխատեսման և հանրային անվտանգության քաղաքականության իրականացման համար մասնակցությունը գլոբալացման բազմաչափ գործընթացներին զարգացող երկրների, այդ թվում նաև ՀՀ-ի համար դարձել է հրամայական: Շնորհիվ տեղեկատվական-հեռահաղորդակցական տեխնոլոգիաների՝ մենք բոլորս կերպափոխվել ենք և շարունակում ենք փոխվել. մեր հոգեբանության մեջ, աշխարհայացքում, շրջապատող աշխարհում տեղի են ունենում արագընթաց փոփոխություններ ուղղված ոչ միայն նյութական, այլև անվտանգության ապահովման պահանջունքներին [3, c. 21-22]: Արձագանքն այս ամենին լինում է երբեմն դրական, երբեմն բացասական, իսկ վերջինիս դեպքում նոր արժեքների մուտքը մեզ շրջապատող աշխարհի իրարամերժ գնահատման է արժանանում: Այս շրջադարձերն անբացատրելի բնույթ ունեն, դրանք հայ իրականությունը կապում են այսպես կոչված նոր կենսակերպի և քաղաքական գործելակերպի հետ, մենք ակամա դարձել ենք այդ գործընթացի անբաժան մասնիկը կրելով ժամանակի պիտակ հանդիսացող՝ «տեղեկացված քաղաքացի» անվանումը:

Տեղեկատվական-հեռահաղորդակցության ձևերի կատարելագործումը հասարակության համար ձևավորել է ցանցային կենսակերպ, որը ենթադրում է տրված ժամանակի մեջ գործունեության բազմաչափություն՝ մրցունակ մասնակցություն, ազատ ժամանակի ռացիոնալացում, շարունակական կրթության միջոցով կիրառական գիտելիքների լեզվափոխում, նորացում, այլընտրանքային ապագայում սոցիալական տարածության ընդարձակում, ինչպես նաև տարաբնույթ (գերիռացիոնալ-սուրիալ) ծառայությունների մատուցում [7, c. 14-15]: Ցանցային գործունեության հիմքը կազմող այս կենսակերպը հարաբերական անկախության մեջ բացահայտում է «Ես»-ի հնարավորությունները և արդիականացնում հանրային անվտանգության համակարգը: Որպես նոր սոցիալական հեղափոխություն՝ այս գործընթացը տեղեկատվական-հեռահաղորդակցական տեխնոլոգիաների զարգացման արդյունքում ինտեգրացնում է զանգվածներին՝ հանրային կյանքում նվազեցնելով հեղափոխականացվածությունը: Վերոնշյալը փաստենք Հ.Ռեյնգոլդի հետևյալ դրույթով. «Փոխվում է մարդկանց վարքաբանությունը. նրանք դառնում են առավել հարմարվող, ինքնավստահ, քանի որ իրենց ձեռքում կամ պայուսակում ունեն գերհամակարգիչներ, հարաբերվում են *WIFI*-ի օգնությամբ, ծառայություններ են մատուցում միմյանց՝ ստեղծելով կոնֆորմիստական անվտանգություն» [8, c. 13]: Այս թվացյալ հարաբերական անկախությունը, այնուհանդերձ, պատճառահետևանքային գործընթացների արդյունք է, քանի որ բազմաչափ գլոբալացման մարտահրավերներին պատասխանելու երաշխիքը ոչ միայն նոր մարտահրավերներ նետելն է, այլև սոցիալական տարածությունն ընդարձակելն՝ անկախ վերջինիս աշխարհագրական դիրքից:

Տեղեկատվական տեխնոլոգիաների կտրուկ զարգացման և հասարակական համակարգի կերպափոխության հետևանքով զանգվածային հասարա-

կույթունից անցում է կատարվել դեպի ցանցային՝ տեղեկատվական հասարակություն: Ցանցային հասարակությունում ձևավորված կառավարման համակարգերն ընդարձակել են տարածության և ժամանակի շրջանակները, ինչն արմատապես արդիականացրել է հասարակության պատկերացումները հանրային անվտանգության վերաբերյալ և ընդարձակել տարաբնույթ տարածքներում «Ես»-ի ցանցային կենսակերպի կառավարելիության սահմանները:

Այսպիսով՝ *ցանցերը համախմբում են միևնույն շահերը հետապնդող սոցիալական միավորների, որոնք տարբեր մակարդակներում հանրային անվտանգության քաղաքականության ապահովման, վերլուծման և կանխատեսման գործընթացներն արդիականացնելու նկատառումներով մրցունակ մասնակցություն են ցուցաբերում ինչպես հանրային և քաղաքական կառավարմանը, այնպես էլ քաղաքացիական հասարակության գործառնմանը:*

Այս գործընթացը ենթադրում է, որ հասարակությունն այլևս միայն չի կառավարվում կենտրոնացված ինստիտուտի՝ պետության կողմից, այլև ընդունակ է ձևավորել բազմադերային հանրային կեցության անվտանգ կազմակերպման տարածություն՝ տարաբնույթ մասնակիցներով: Արդյունքում՝ ձևավորվել է ցանցային հասարակություն, որը, սոցիոլոգ Մ.Կաստելսի պնդմամբ, հանրային կառավարման նոր մոդել է: Իսկ բյուրոկրատական ապարատի ապակենտրոնացմամբ զուգամիտված սոցիալական ցանցերի ակտիվ գործունեությունը կհանգեցնի կառավարման ոլորտի թափանցիկության հաստատմանը և կնպաստի գլոբալ կառավարման համակարգ ինտեգրվելու գործընթացին: Սոցիալական ցանցերի սրընթաց տարածումը հասարակական կյանքի կառավարման տարբեր ոլորտներում քաղաքացիների «մասնակցային հնարավորությունները» բարձրացնելու, քաղաքական որոշումների կայացմանը նրանց ներգրավելու, «իշխանություն-ժողովուրդ» երկխոսության կայացման նպատակ են հետապնդում: Ավանդական բյուրոկրատական կառույցներն աստիճանաբար ընդունելով ցանցերի հեղինակությունը՝ համապատասխան տեղ են հատկացնում ինքնաձրագրավորվող, ինքնակառավարվող այս միավորումներին, որոնց համախմբման առանցքային սկզբունքներն են ապակենտրոնացումը, մասնակցությունը և հանրային անվտանգության ապահովումը:

Վերոշարադրյալը հնարավորություն է տալիս ընդունել հանրային անվտանգության ապահովման գործընթացի վրա սոցիալական ցանցերի ներգործության հետևյալ հիմնավորված կենսասոցիալական սկզբունքները.

- *ապակենտրոնացված աստիճանակարգություն*, որը մրցակցային մասնակցության միջոցով ընդլայնում է զարգացող սոցիալական ցանցերի գործունեությունը,
- *բազմադերային կառավարման դաշտ*, որտեղ քննարկումների և ընդհանուր պատասխանատվության արդյունքում կընդունվեն և՛ հանրային անվտանգությանը վերաբերող բանաձևեր, և՛ կհստակեցվի յուրաքանչյուր դերակատարի պատասխանատվության մակարդակը,

- *հետևողական ուշադրություն*. ձևավորելով հոգեբանական հարմարվողականություն՝ ուրվագծում է փոխօգնության և փոխլրացման երևույթների մուտքը հանրային անվտանգության քաղաքականության համակարգ:

Այսպիսով՝ ցանցերի հայեցակարգը հանրային անվտանգության ձևավորման մշակման, իրականացման և բնականոն արդիականացման գործընթացում որոշիչ դեր ունի քաղաքացիական հասարակության և պետության, միջին խավի կայացման, քաղաքական ընտրանու ճնշման խմբերի փոխհարաբերությունների նորմավորման գործընթացում: Այս մոտեցման համատեքստում հասարակական համակարգի հետխորհրդային կերպափոխմանն ուղեկցող անկայունության և ռիսկի աճի պայմաններում հնարավոր է հանրային անվտանգության քաղաքականության կառուցվածքում հստակեցնել քաղաքական որոշումների մշակման, ինչպես նաև սոցիալական հարաբերությունների գլոբալացման և պետության ու քաղաքացիական հասարակության փոխհարաբերությունների ձևաչափերը: Միաժամանակ, կարելի է բացահայտել նաև հանրային անվտանգության քաղաքականության վերլուծության, կանխատեսման և արդիականացման տեղեկատվական աղբյուրները և այլընտրանքային հնարավորությունները:

Գլոբալացման արդյունքում ի հայտ եկած նոր աշխարհակարգի տարբերակիչ գծերն են.

- «ազգային հզորություն» հասկացության ցանցավորում
- իրավական հիմքերի ինստիտուցիոնալ երկվություն (ազգային և միջազգային)
- աշխարհում տեղի ունեցող գործընթացներից մեկուսացման անհեռանկարայնություն՝ «քաղաքականություն գրոյական արդյունքներով (Ջ.Մարտորի)»
- կառավարողների գործառույթների անձնագրավորում՝ համաձայն պարտականությունների և հատկանիշների սանդղակավորման
- տարաբնույթ ինտեգրացիոն գործընթացների խթանման և ինտենսիվության աճ
- ներքին և արտաքին քաղաքականության միջև անջրպետի վերացում:

Ազգային հզորության ավանդական չափանիշներին (տարածք, բնակչություն, տնտեսական զարգացման աստիճան, բանակի զինվածության և մարտունակության մակարդակի աճ, գիտատեխնիկական ինովացիա, համագործակցության համակարգ և այլն) զուգահեռ հանդես են գալիս նոր գործոններ՝ տեղեկատվական-հեռահաղորդակցական, նոր դիրքեր աշխարհի ֆինանսական շուկաներում, նոր տեխնոլոգիաների յուրացման արագություն, միջազգային կազմակերպությունների միջոցով անվտանգությանն ուղղված տարբեր երևույթների վրա ազդելու հնարավորություն: Տեղի ունեցող փոփոխություններն ընդարձակել են միջազգային մարդասիրական իրավունքը, որը հենված

Է աշխարհաքաղաքացու ինստիտուտի ձևավորման գործընթացի վրա: Տվյալ պարագայում իրավական համակարգերի համընդհանրացումը խթանում է այլ գլոբալիզացիոն գործընթացների զարգացումը, այդ թվում՝ աշխարհի տնտեսության ձևավորումը, հեռուստահաղորդակցության բուռն աճը, միջազգային հարթակում զանգվածային տեղեկատվության միջոցների ընդարձակումը, ազգաբնակչության արտագաղթը, տուրիզմը և այլն [9, c. 85-86]:

Որպես այս օբյեկտիվ երևույթի կառավարելիությունն ապահովող դերակատար *մերիտոկրատական էլիտան*¹ նոր որակներ է ձեռք բերում: Պայմանավորված տեղեկատվահաղորդակցական տեխնոլոգիաների հեղափոխությամբ, Ինտերնետի նոր հնարավորությունների ընդարձակմամբ՝ *G-8-ի, G-20-ի* պետությունների մերիտոկրատական էլիտան վարչաինտելեկտուալ և ռազմավարական գործունեություն է ծավալում կորպորատիվ շահերի և համագործակցության հիման վրա: Արդյունքում՝ եթե ազգային կառավարող դասի ինքնությունը հարահոս արդիականացման չի ենթարկվում և պատրաստ չէ պատասխանելու արտաքին մարտահրավերներին, ապա գլոբալ ինստիտուցիոնալ համակարգում գործող մերիտոկրատական էլիտայի տարաբնույթ խմբերը շահարկում են ազգային, տարածաշրջանային անվտանգության շահային համակարգը հոգուտ գլոբալի:

Հաստատվում են մեզահասարակություններ, որոնք ցանցային գործունեության համար ստեղծում են նոր սոցիալական տարածություններ՝ ներառելով զարգացման միևնույն մակարդակում գտնվող մի քանի հարևան պետությունների տարածությունները: Անդրազգային տարածություններում գործառող նոր հասարակական ու մասնավոր ինստիտուտների աճն աննախադեպ մարտահրավեր է նետել պետության ինքնիշխանությանը: Բազմաչափ գլոբալացման տեսաբան, բրիտանացի Դևիդ Հելդն ուսումնասիրել է գլոբալացման արդյունքում պետության ինստիտուտի գործառույթների փոփոխությունների հինգ հիմնական տարբերակ.

- Ազգային կառավարություններն այլևս չեն հանդիսանում հանրային անվտանգության և իշխանության միակ կրողները: Ցանցային գործունեություն ծավալած տեղական և միջազգային տարաբնույթ կազմակերպություններն իրենց վարչական և ռազմավարական կառավարող էլիտաների օգնությամբ հնարավորություն են ստացել գործառել ազգային սոցիալական տարածություններում:

¹ *Մերիտոկրատիա* - լատ. *meri(tus)* - արժանավոր, և հուն. *kratos* - իշխանություն - ծառայության (նաև արժանիքների) համար ստացած իշխանություն, կառավարելու իրավունք: Հասկացությունը շրջանառության մեջ է դրվել անգլիացի սոցիոլոգ Մ.Յանգի կողմից, ի հակադրություն «արիստոկրատիայի» հայեցակարգի: 1958թ. հրատարակած «Մերիտոկրատիայի բարձրացումը, 1870-2033» հակաուստոպիայում Մ.Յանգը երգի-ճանրով նկարագրում է հիմնականում մտավորականությունից կազմված, նախաձեռնողական ունակություններով օժտված, այսպես կոչված «նոր օլիգարխիայի» իշխանության կրախը: Նեոկոնսերվատիվ ուղղության ներկայացուցիչները (Ջ.Բժեզինսկի, Մ.Պլանտեր և այլք) տերմինին տվեցին դրական բովանդակություն և ձևավորեցին մերիտոկրատիայի քաղաքական մի տեսություն, որը կոչված է արդարացնելու «նոր՝ ինտելեկտուալ էլիտայի» գերազանցությունն այլոց վրա (տե՛ս *Մ.Մարգարյան*, Քաղաքական էլիտա, Երևան, «Պետական ծառայություն», 1999թ., էջ 50):

- Ազգային պետությունն ինքնորոշման և անվտանգության ապահովման միակ աղբյուրը չէ:
- Մարդու իրավունքները գերակայում են ինքնիշխանության գաղափարին՝ պայմանավորված իշխանության և անվտանգության փոխհարաբերությունները կառավարող էլիտայի որպիսությամբ, որը հանդես է գալիս որպես նոր հանրային կառավարման սկզբունքների կրող:
- Միջազգային իրավունքի սահմաններում հնարավոր չէ միանշանակ լուծել էթնիկական բախումների, ցեղային տարաձայնությունների և կլանային էլիտայի գործունեության արդյունքում ի հայտ եկած սահմանային խնդիրները:
- Համակարգված կերպով պարզաբանված չեն ներքին ու արտաքին հիմնախնդիրների (էկոլոգիական, միջուկային թափոնների կառավարման, մարդկային ռեսուրսների զարգացման) լուծման մեխանիզմները, բացի դրանից, քաղաքական տարածությունն այլևս չի սահմանափակվում միայն պետության տարածքով [10, p. 2-8]:

2. Գլոբալացումը և «ոսկե միլիարդի» ցանցային գործունեությունը

Ակնհայտ է, որ «ոսկե միլիարդը» «...գաղափարապես բեռնավորված» ուժեղ սոցիալական միավոր է, որը, ունենալով մրցունակ կրթություն, կարողանում է բարձր եկամուտներ ստանալ կամ ազդելով կառավարության գործունեության վրա, կամ հավաքագրվելով դրա զարգացման մեջ: Միաժամանակ, նրանք կարող են հանդիսանալ խմբիշխանական (օլիգարխիկ), մեկուսախմբային (կորպորատիվ), սահմանային (մարզինալ) որոշումների կայացման դերակատարներ՝ շահարկելով հանրային շահը: Փաստորեն, «ոսկե միլիարդը» կառավարության գործունեության վրա կարող է ունենալ ինչպես հումանիստական, այնպես էլ ոչ հումանիստական ազդեցություն: Այսպես, երբ ՄԱԿ մի շարք փորձագետներ հայտարարում են, որ երկրի վրա բարեկեցիկ կյանքը հնարավոր է միայն մեկ միլիարդ մարդու համար, նրանք, ըստ էության, նկատի ունեն «ոսկե միլիարդին» [11]: Սակայն «ոսկե միլիարդը» որպես գիտելիքի կառավարման միջոցով մարդկային կապիտալի իրացման ուղիների արդիականացման գործընթացի պատասխանատու, պարտավոր է նպաստել գլոբալ կառավարման համակարգում բարեկեցիկ պետության և քաղաքացիական հասարակության ձևավորմանն ու կայացմանը: Քաղաքացիական հասարակությունն իր հերթին նպաստում է կառավարության գործունեության մեջ «ոսկե միլիարդի» մաս կազմող մարդկանց գիտակցության մեջ ամրագրելու հանրային շահերի ապահովման անհրաժեշտությունը համընդհանուրի բարեկեցության համար: Տվյալ սկզբունքի հետ կապված հատկանշական է Կ.Թորեսի հետևյալ միտքը. «...Կրթված քաղաքացիները համարվում են թանկարժեք ունեցվածք... կրթական հաստատություններն անհատներին սոցիալականացնում են յուրահատուկ ձևերով՝ ժողովրդավարական կամ հակաժողովրդավարական կառույցների հանդեպ ստեղծելով առանձնահատուկ քաղաքական

կողմնորոշումներ» [12, էջ 47]:

Կառավարության գործունեության վրա «ոսկե միլիարդի» երկակի ազդեցությունը քննարկելով՝ նոր ազատականությունը մարդկային կայուն զարգացումը դիտարկում է նոր «գերմարդու» ստեղծման համատեքստում, այսինքն՝ գիտելիքահենք տնտեսության միջոցով նոր գլոբալ հասարակության հաստատման նախագիծն իր *ցանցային ծայրամասերով և կենտրոններով* լի է անորոշություններով, տարաբնույթ բախումներով, միաժամանակ տրոհված է և օտարված: Նոր ազատականության հոգևոր առաջնորդ Ֆ. Ֆոն Հայեկը չի մերժում սովորական մարդկային համերաշխությունը. վախի, օտարման և տառապանքի բնագոյներին ընդդիմանալու նկատառումներով կառավարման գործընթացում ներդրվող նոր տեխնոլոգիաները հնարավորություն են տալիս մեծացնել ազատության տիրույթները: Կանխվում է ծայրամասերից դեպի կենտրոններ արտագաղթը, զարգացող երկրներում մեծանում է գիտելիքի կառավարման դերը մարդկային կապիտալի արդիականացման գործընթացում՝ ընդարձակելով գիտելիքահենք տնտեսության զարգացման և աշխատանքի միջազգային նոր բաժանմանը մասնակցելու հնարավորությունները: *Այս պարագայում հանրային անվտանգության ապահովման գործընթացում գիտելիքի կառավարումը հենվում է մարդկային կապիտալի իրացման ուղիների արդիականացման* հետևյալ գործոնների վրա.

- Բարձր մրցունակություն սոցիալական բոլոր տարածություններում
- Բարձր վարձատրություն՝ ամրագրված պայմանագրային հիմունքներով
- Բարձր շարժունակություն և նախաձեռնություններ՝ ինովացիաների խթանում:

Ամփոփենք. գլոբալացման բազմաչափ գործընթացն աննախադեպ մարտահրավերներ է նետել զարգացման տարբեր մակարդակներում գտնվող երկրների հանրային անվտանգությանը: Նոր աշխարհակարգը հենց իր ձևավորման ընթացքի մեջ հարկադրված է վերիմաստավորել և՛ տեղական, և՛ տարածաշրջանային, և՛ գլոբալ հանրության համար առկա սպառնալիքները, որն էլ ենթադրում է համընդհանուր անվտանգության հայեցակարգի ընդունում: Զանգվածային աղքատությունը, տնտեսական հետամնացությունը, էթնիկական ընդհարումները, տարաբնույթ ահաբեկչական գործողությունները, կոռուպցիան, թրաֆիքինգը՝ իրենց ցանցային դրսևորումներով, լուրջ վտանգ են հանրային անվտանգության ապահովման համար: Չնայած միջազգային կառույցների ծավալած գործունեությանը և առկա պայմանագրերին, այնուհանդերձ, հնարավոր չէ կանխատեսել էկոլոգիական, տնտեսական, պարենային, ժողովրդագրական, տեղեկատվական և այլ ոլորտներում առկա ճգնաժամերի ազդեցությունը ռազմաքաղաքական անվտանգության ապահովման վրա: Այս ամենն առավել քան սրվում է առկա տեղեկատվական պատերազմների արդյունքում, որոնք ընթանում են միջէթնիկական բախումների, միջպետական հարաբերությունների սրման, միջէլիտային անհանդուրժողականության պայմաններում: Նետված մարտահրավերները, որոնք սպառնալիք են հանրային

անվտանգությանը, նպատակահարմար չէ դիտարկել «քաղաքակրթությունների բախման» (Մ.Հանթինգթոն), «երրորդ համաշխարհային պատերազմի մեկնարկի» (Ֆ.Էնգելհարդ), աշխարհի բաժանումը «խաղաղության և ընդհարման գոտիների» (Հ.-Հ. Հոլմ և Գ.Սորենսեն) սցենարների տիրույթներում: Տեղական, տարածաշրջանային և գլոբալ հանրային անվտանգության ապահովման համար անհրաժեշտ է *արդիականացնել ազգային պետական անվտանգության հաստատման ռազմավարության հայեցակարգը*: Այդ առումով կարևորվում են համընդհանուր վարքագծի կանոնների ու օրենքների (օրինակ՝ ուժի կիրառման արգելքը, մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պահպանումը, խոցելի խմբերի մասնակցությունը) ընդունում, որոնք իրենց սոցիալ-հոգեբանական և սահմանադրաիրավական հիմքերով հրամայականներ են՝ նոր հանրային կառավարման սկզբունքների հաստատման գործընթացում:

Տարբեր տարածաչափություններում հանրային անվտանգության ապահովման համար մշակվող հայեցակարգում անհրաժեշտ է համակարգել մարդկության առջև ծառայած և՛ ավանդական, և՛ ոչ ավանդական սպառնալիքներն ու վտանգները, որոնք կարող են կերպավորվել բազմաչափ գլոբալիզացիոն գործընթացների հետևանքով:

Գլոբալացման բազմաչափության պայմաններում ՀՀ հանրային անվտանգության ապահովման համար կարևոր է թե՛ ազգային և թե՛ միջազգային ներդրումով մասնակցել պատմական այս գործընթացի ծավալմանը: Միայն նմանատիպ քաղաքականությամբ հայ հասարակությանը հնարավորություն կընձեռվի բացահայտել իր ուրույն դերը, տեղն ու նշանակությունը գլոբալ հանրությունում: Ժամանակի մարտահրավերներին պատասխանելու համար այսօր անհրաժեշտ է ունենալ համամարդկային և ազգային արժեքների հիմքի վրա զարգացող բարեկեցության պետություն, որն իր կառավարման համակարգով և գործունեությամբ դինամիկ կերպով կմասնակցի գլոբալ անվտանգության արդիականացմանը:

Աղբյուրներ և գրականություն

1. *Atkinson M.M., Coleman W.D., The state, business and industrial change in Canada.* Toronto: University of Toronto Press, 1989.
2. *Van Waarden, Dimensions and types of policy networks, European Journal of Political Research, 1992.*
3. *Тихонова С.В., Халин К.Е., Политическая мифология в сетевом обществе: от смерти политики к умным толпам, Вестник Московского университета: социология и политология, серия 18, N3. 2008.*
4. *Harry Anastasiou, The Communication Imperative in an Era of Globalization: Beyond Conflict-Conditioned Communication, Spring 2007.*
5. *Кастельс М., Информационная эпоха: экономика, общество и культура, М., 2003.*
6. *Manuel Castells, The Internet Galaxy: reflections on the internet, business and society, Oxford University Press Inc., New York, 2001.*

7. *Франсуа Лиотар*, Состояние постмодерна, пер. с франц. Н. А. Шматко, М., 1998.
8. *Рейнгольд Говард*, Умная толпа: новая социальная революция, пер. с англ., А. Гарькавого, М., 2006.
9. *Горбачев М.С. и др.*, Грани глобализации: трудные вопросы современного развития, М., 2003.
10. *Held D., McGrew A.*, Globalization theory: approaches and controversies, Cambridge, 2007.
11. *Кара-Мурза С.*, Концепция «золотого миллиарда» и Новый мировой порядок // www.bookz.ru (30.07.2010).
12. *Թորկու Վ.Ս.*, Ժողովրդավարություն, կրթություն և բազմամշակութայնություն. քաղաքացիության երկրնորանքները գրքի աշխարհում, Եր., 2005:

МНОГОМЕРНАЯ ГЛОБАЛИЗАЦИЯ И СИСТЕМА ОБЕСПЕЧЕНИЯ ОБЩЕСТВЕННОЙ БЕЗОПАСНОСТИ

Карен Галоян

Кандидат политических наук

Резюме

При вызываемых глобализацией изменениях современных социальных условий, основанных на системе независимых национальных государств, сам глобализационный процесс может рассматриваться в качестве возрастающей угрозы общественной безопасности стран, находящихся на разных уровнях развития. Новый миропорядок вынужден предоставить более подходящее, современное значение местной, региональной и глобальной общественной безопасности, которое и станет концепцией общей (всемирной) безопасности. В статье отмечается, что выявляемые в разных государствах массовая бедность, экономическая нестабильность, этнические конфликты, разнообразные террористические акты, коррупция, траффинг являются скрытой угрозой поддержанию общественной безопасности. Несмотря на все меры, предусмотренные международными организациями и договорами, все еще невозможно предусмотреть влияние всех этих экологических, экономических, демографических, информационных и прочих бедствий на обеспечение гражданской и военной безопасности. Для обеспечения национальной безопасности на местном, региональном и глобальном уровнях, очень важно модернизировать концепцию национальной безопасности внутри каждого национального государства. С этой точки зрения особая важность придается следованию общим поведенческим законам и правилам (например, разрешение на использование силы, защита неотъемлемых прав и свобод человека и гражданина, работа с наиболее уязвимыми группами и т.д.), которые являются обязательными для утверждения новых принципов государственного управления.